

DAVROS

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԲԱՅՆՈՐԴԱԳԻՆ

Պուշկարիոյ համար տարեկան	10 ֆր.
» » վեցամսեայ	5 »
Արտատպանի համար տարեկ.	12 »
» » վեցամսեայ	6 »

ՎՃԱՐՄՈՒՆԻՔ ԿԱՆԻՒԿ

Նամակ, ծրար եւ այլ պէտք է դրել հետեւեալ հասցեով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԵԱՆ

Տէր և խմբագիր Տաւրոս շաբաթաթերթի

Х. Чакрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
ОТГОВОРНИКЪ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկամբը գրութիւնք կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ: Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ ետ չեն տրուիր: Դրանուցման տողը 20 անթ.: Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն: Դրանուցմունք կ'ընդունուին անէն լեզուաւ:

Ա. ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆԻ 28 ԱՊՐԻԼ 1898

ԹԻԻ 11

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Մեր վիճակը արդէն խոստովանած ենք և նորէն կրկնելու հարկ չենք տեսներ: Հանգամանքներու առջեւ ստիպուած ենք շատ տեղեր «Տաւրոս»-ը ձգել զրկել, որպէսզի անոր տարածութիւն գտնելովը Հայ ժողովուրդին ճակատագիրը իրենց առարկէզ ընարող գիտականորեն լուծ վարագործը ծղիկ ծղիկ պատուի վար իյնայ, եղբայրասպանութիւնը դադարի, միութեան հոսանքը զօրանայ, ընդհանուր Հայկական կազմակերպութեան շուտափոյթ գոյութեամբը գոտեպնդեալ կատարեալ հաւատքով և հաստատուն յոյսերով բոլորուինք Հայրենիքի և Ազգին փրկութիւնը խոստացող սեղանին շուրջը:

«Տաւրոս» իր տարած բարոյական յաղթանակին վրայ ուրախ է, իսկ նիւթական պակասութեան առջեւ կը նեղուի, կը չարչարուի, ուստի պարտաւորուած դիմում կ'ընենք և կը խնդրենք որ «Տաւրոս»-ի ուղղութեան համակիր և միանգամայն նիւթապէս ալ կարող բարեկամք իրենց յօժարակամ նպաստներով օգնութեան հասնին մեզ:

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

ԴԱՐՁԵԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Մենք բաւական երկար զբաղուեցանք դաշնակցութեանը և դաշնակցականներով, գուցէ, «Տաւրոս»-ի ընթերցող մեր պատուական եղբայրներուն մէջ, ձանձրոյթ իմանալով զմեզ մեղադրողներ ալ գրտնուին. սակայն մենք ի սկզբան ըսինք թէ, չինութեամբ չը պիտի զբաղինք, այլ տապար ու փայտահատի ձեռքին պիտի քանդենք, պիտի կործանենք վնասակար ու անպէտք շէնքերը, և ի մի կողմ պիտի առնուինք այն արգելիչ առարկաներն,

որպէսզի կարող ըլլանք հարթ յատկը գտնել, հաստատ հիմքը բանալով ու անոր վրայ կառուցանելք չենքին համար աշխատիլ. ասիկա ո՛չ կարծուածին չափ դիւրին էր և ո՛չ ալ ամէն թուականութի գործ, մանաւանդ առանց պիտոյական դասադասութեան վնասի, առանց տեւորի պատգամաբերներու մահաւորութեան ներկայացուցիչներու և առանց վեցհարուածեան կամ երկսայրիներու ոսկեգրպան կամ արծաթաբեր աղբեղութեան, որովհետեւ մեր ազգային բարձրագոյն ու ցածագոյն ունեւորները միայն այն տեսակ լեզուներէ կը հասկնան:

Վարպետ պիւրոյականք լաւ գիտցան ու նշմարեցին իրականապէս միջոցը, եւ բնաւ անպարկեշտութիւն կամ անազնութիւն չը համարեցին իրենց դրամ չորթելու եղանակը: Ութը տարի ամբողջ արմատ դրած էին ժողովուրդի սրտին մէջ, հոգւոյն մէջ:

Խեղճ լեռան մարդ, տաւրոսի զեյթունցի, տարակոյս չը կար թէ չը պիտի կրնար թեւ տալ գեղեցիկ սեւին և գրաւէր անոնց նոնդիկ սիրտը, պատառոտի վերաբերում և թողնած ու թողմած այտերով:

Հայ ունեւորը դրամ տալու համար ունեւորին ձեռք տեսնել կ'ուզէ, ու անոր ուղղուած պարկեշտ ու անկեղծ քարոզներն որքան ալ ճշմարիտ լինին ճանճի ու մեղուկի բզզանքներ են... հետեւաբար այս տեսակ հանգամանքներու եւ հիւսուածներու առջեւ, «Տաւրոս»-ը կարող չէր քանի մը ամսուան մէջ արգելիչ առարկաները բառնալ, արմատախիլ ընել և իւր ձեռնարկելիք չինութեամբը զբաղիլ. ուրեմն կը խնդրենք եթէ կան ձանձրացող եղբայրներ, թող հաճին քիչ մը եւս համբերատար ըլլալ, որ տեսնեն աւանդուն պարզ, անդիմակ ու անվարագործ:

Դիւցազն բայց անօթի Զէյթունցիներուն, Տաւրոսի առաջնական զաւակներու աղաղակաց արձագանքն է, Մեծ ու Փոքր Հայաստանի կոտորուածոց արեան մուխն է որ, հրաբխային լաւայի մը պէս կը ժայթ-

քէ, կը պոռթկայ մեր բերնէն դուրս, հարիւր հազարաւոր նահատակներու, եղբայրասպանութիւններու վրէժն է որ այսքան կծու խօսել կուտայ մեզ:

Հայ ժողովուրդ, ժընէվի ու Լոնտոնի փետուրներով զարգայուած ազգաւոր չէ որ կը կոկոնայ քու դիակին վրայ, այլ Զէյթունի կաքաւը, Տաւրոսի տաւրակը և վասպուրականի պլուզը, որ կը խօսի քեզ, որ կը ձայնէ քեզ:

«Տաւրոս» խմբագիրն և բոլոր աշխատակիցք, հայրենիքի զաւակ ու քու ցաւերուդ ցաւակից հարազատ ու անխառնուրդ զաւակներ են — Տիւնճէ, Լիօ, Լեռնայ, Անկողմակալ, Արմաւիր, Զաթօ, Թաթօ, Նալբանտ եւն, եւն. — աւանդն ալ քեզ պէս հայ ու հայու զաւակ, քու վէրքերը ունին, քու խոցերը ունին, իրենց մարմինն մէջ, իրենց մարմինն դուրս, հոգիներն ունին մէջ, սրտերն ունին մէջ, գարնջուրի փրկութիւններով չէ որ կը գրեն անոնք, այլ արիւնէն աւելի կծու արցունքներով: Գո՛ւթ ունեցիր, հայ ժողովուրդ, գո՛ւթ ունեցիր, անխիղճ ու անզգայ մի՛ ըլլալ, ըսէ՛ անոնց, թեւ թիկունք եւ զիր, միութեան եկո՛ւր և միացիր, եթէ կուզես փրկուիլ, եթէ կուզես հայու պէս ապրիլ, մարդու պէս ապրիլ, տես, կարգաւ, կշիռի դիւր որ իմանաս չափը և քանակը, ըսուածին ու լուածին:

Ուշագրութեամբ կարգաւ Պարոն Ոսկան Նազարեանցի նկարագրած եղբայրասպան նախճիւններն, հրէշային ոճրագործութիւններն, որոնց իրատես եւ ականջալուր եղած է ինքը. Պ. Ոսկան Նազարեանց՝ Հայաստանի զաւակ՝ Վասպուրականէն կուգայ, Վանէն կուգայ, Պարսկաթուրք սահմանագրութեն կուգայ, Հայաստանի սրտէն կուգայ, հոգիէն կուգայ, ճակատաբաց կը խօսի եւ յայտնի ու ծանօթ ստորագրութիւն կը գործածէ:

Լսէ՛, Հայ ժողովուրդ, մտի՛կ ըրէ՛ եթէ ապուշ չես, եթէ անզգայ ու անխիղճ չես, եւ մի՛ խաբուիր այն աղրուկներուն (սիւլիւկ)՝ որոնք քու կեանքդ, քու արիւնդ կը շահագործեն, միայն իրենց ժընէվական ու Լոնդոնական հաճոյքները գոհացնելու համար:

Հայ ժողովուրդ, շուտով, շատ

շուտով միութեան եկո՛ւր, վառէ՛, ջահաւորէ՛ միութեան եւ միաբանութեան փարօսը, եւ այն ատեն դու ինքնին պիտի տեսնես ու համոզուիս թէ՛ ի՛նչ կեղտոտ արարածներ քեզ իրենց գործիք ըրած կը շահագործեն, եւ չափիկ ու վարտիկի պէս ուզած ատեննին կը փոխեն...:

Վերը՝ միութեան առթիւ ու շատ հեռուն գացի, սակայն դու Հայ ժողովուրդ, գիտես ինչպէս կանխաւ ալ ըսած եմ, իմ ըսածէս, իմ գրածէս եւ ինքս ալ կը գրգռուիմ:

Հայկական չորս անգամ վերականգնած հարստութիւններ անմիութեան և անմիաբանութեան պատճառաւ անանկացած են, չորս հատ վեհակազմ պետութիւններ — Հայկազեան, Արշակունեան, Բագրատունեան, Ռուբինեան — անմիութեան և անմիաբանութեան պատճառով կործանուած, քար ու քանդ եղած են...:

Հայ ժողովուրդ, անմիութեան պատճառով գերի եւ սարուկ դարձած ենք յոյնին, պարսկին, արապին ու թաթարին, անմիութեան ու անմիաբանութեան պատճառով է որ, թուրքի պէս վայրենի ու բարբարոս ազգի մը ձեռք գերի ենք 500 երկար տարիներէ ի վեր: Հայ ժողովուրդ, անմիութեան ու անմիաբանութեան պատճառով է որ, ահա՛ այսօր 300,000 նահատակներով, 50,000 որբերով, 2,500,000 նիւթապէս, ֆիզիքապէս ճշակտոր եղած թշուառներով կը պարծին պիւռօ ու կեղբոնական հերոս ու հերիւաններ:

Հայ ժողովուրդ, դու ալ փաստը պարսիկ կամ փեւսիկ մի՛ հասկնար. ըսածներս պատմութիւններով հաստատուած են, և դու քու աչքովդ տեսած, քու ձեռքովդ շոյափած ես, դարձեալ կ'ըսեմ, մարդ երկու երկայն ականջի տակ իշու ուղիղ ու նենալու է որ, այսչափ հաստատուած փաստերը պարսիկ կամ փեւսիկ հասկնայ:

Միութիւն, միութիւն, դարձեալ միութիւն, ահա իմ ըսածս, առանց անոր չի կայ փրկութիւն, ինչ որ ըսած ենք առաջ, նոյնը պիտի ըսենք և յետոյ:

Եղիցի միութիւն, կեցցե՛ն Միութենասէրք:

0x0 = ՀԱՋԱՐԵՆ ՄԵԿԸ

Արփիար պիտի ստանայ իր ջախջախիչ պատասխանը: Վերջապէս վարժապետը պիտի խօսի ու արեւս անոր անուան վրայ կամ անոր անուան բոլորովէր չը պիտի թրթռան արն ողորտ բառերը, որոնք շնորհիւ չարածծի Արփիարին սկսած էին կամայ կամայ հոմանիշ դառնալ Հրանդի անուան հետ, անոր խոհեմութիւն սեպած ու չարի անցած լուծեանը պատճառաւ:

Ահա ինչ որ կը հաղորդէր օրեր առաջ բոլոր հայ սրճարաններուն շրմուէ հեռագրաց գործակալութիւնը, զոր մեծ խնամքով կը պահէ իր ձեռքին սակ «Շարժում» թերթը ասանկ պարագաներու համար: Եւ ստուգիւ Սփինքը խոսեցաւ Ապրիլ 22 ին այն կզական ոճով, ինչպէս Արամիզա՝ աստուածներու վեհապետն իսկ չէր յոյս գնած խօսիլ իր ոյիմպական գահոյից վրայէն:

Հագարէն մէկը՝ Պ. Հրանդի դուռնի վրէժն է և պիտի մնայ միշտ, անոր համար մանաւանդ, որ նոր գարոյի մը գունը կը բանայ կըռնակի վրայ, փափագողին սովորեցնելու համար բանաստեղծօրէն:

Մէկ խօսքի տեղ հինգ հայհոյանք Մէկ փաստի տեղ տասը լուսանք: Կը ծափենք իր գարոյը, բայց ոչ իր խելը, զի պողպատի ճանկերով սպառնացող ու միւս կողմէն «Նէ» վտրիջօրստն» հրէական ծանօթ քայլերգով փախուստ տուող մարդուն մակդիրը, շատ ազատ է...

Այո՛, կը թքենն այդ փառ երեսօյի ժին վրայ, անոր մէջ տեսնելով ամեն քաջարարութենէ և ինքնապաշտպանութեան համար հարկաւոր եղած ամեն բարոյական ուժէ զուրկ ու թափուր էութեան մը տըխուր աւերակները:

Պ. Արփիարին պատասխանելու հարկն անհրաժեշտ է. միջին ճանքայ չը կայ: Կամ լռել ու գատապարտուիլ և կամ խօսիլ ու փրկուիլ, եթէ կարելի է: Պ. Հրանդ այս անգամ չը պատասխանեց, այլ սրտին մարմնէն քանի մը հայհոյանքներ տեղադրեց «Շարժում» թերթի ըստամբան մէջ: Բայց վերջապէս պէտք է, որ պատասխանէ. վասնզի այս է ժողովուրդին և իր արժանապատուութեան միակ պահանջը, եթէ ունի:

Ուստի հրապարակաւ խորհուրդ կուտանք իրեն մէկդի նետել սա պողպատի ճանկերը, որ իր Հագարէն մէկով կամիմ մը անգամ չարժեք ու երկաթի ձեռքերը որ իրենց ջղաճգական ապիկարութեամբ շատ ծիծաղելի դարձան ու հերքելի վրայ ծանրացած ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹԵԱՆ, ԴԱԽԱՑՈՒԹԵԱՆ ու ՉԱՐԱՅԵԱՆՈՒԹԵԱՆ ահաւոր ամբաստանութիւնները երկու խօսքով, եթէ տակաւին համարուած լինեցած չեն յաւիտեական պոռթկոյթի օրերը, զի, առաջ պոռթկումները, բան մը չապացուցաներ և ժողո-

վուրդն ալ իր այս նահատակ վեհակին մէջ երբեք տրամադիր չէ ալ եւս մտիկ ընելու զանոնք. վասնզի հերթը խաբուեցաւ, հերթը գաւաճանուեցաւ ու հերթը շահագործուեցաւ միշտ լոյսէն հեռի ու մութին մէջ... Երկու խօսքով լսինք: Ահա թէ ինչպէս:

«Պ. Արփիար, Ուրվհետեւ Ձեզի հրապարակաւ տալիք պատասխաններս — անուններ չօշափելու հարկին տակ — կըռնան վտանգել անոնց դրութիւնը, եւ կ'առաջարկեմ Ձեզ պատույ ատենան մը, նոյն իսկ վառնայի մէջ, որ լիազօր իշխանութիւն ունենայ վճիռը երկդիմի չը պիտի ըլլայ ու պիտի հրատարակուի մասնաւորապէս կուսակցութեանց օւկաններուն մէջ և մենք պիտի համակերպինք առանց առարկութեան. ուստի նըշանակեցէք Ձեր մարդիկը, եթէ քաջութիւն ունիք, թէ ոչ, լռեցէք»:

Ահաւասիկ այս է ամենէն կտրուկ ու անխուստիների պատասխանը և ասով միայն պիտի թեթեւայ Պ. Հրանդ իր շարաքն առած գարշելի ոտականներու տապալէն, ապա թէ ոչ Hélas, ils sont toujours là!

Վասնզի իր հուշակաւոր Հագարէն մէկը՝ շիտակը խօսելով, եթէ բան մ'ըլաւ, այն ալ ոչ թէ հազարէն մէկին գոյութիւնը հաստատեց, այլ միայն օդին գէմ սուր քաշող ասպետին ծիծաղելի քաջութեամբը գեղծն գեղջով բազմապատկեց:

ՆԱԼԲԱՆՏ

ԴԱՇՆԱԳԱՍԱՆՆԵՐԸ ՊԱՐՍԻԱՍՏԱՆՈՒՄ (Շար. 10 թիւէն)

Ամերիկայից չեմ գալիս քննադատելու այս տեսակի Յեղափոխական գոյն ունեցող ցոյցեր, ոչ էլ Լոնդոնից, Ժընէվից կամ Պետերբուրգից, Կովկասից եւ ոչ նոյն իսկ Բուլղարիոյ գարնջրատանց կամ այլ եւ այլ մութ, անաղբուր հիմնարկութեանց սրած դաշխոնները որոտագին թնդացնող «Յեղափոխութիւն», «Յեղափոխութիւն» գործողների չըրջանից... Եւրոպայի պոռթկումի, սինըր-անբարոյականի անմաքուր, հոտած բերաններումն էլ ընկար դուռով վեհապատ խօսք, — «Յեղափոխութիւն» — եւ ի հարկէ նրանք իրենց հաճելի իմաստով... ըմբռնեցին քո վեհաւորները: Վերոյիշեալ վայրերից չեմ գալիս, հապա եկել եմ այն երկրի միջից, որտեղ եղած Հայ տարրը երկար ժամանակէ ի վեր քաղաքակիրթ, մարդասէր եւրոպոյի ճակատին արդէն իսկ մտր եւ նախատինք եղող եւ ցարդ իր գոյութիւնը պահպանող թուրք բռնակալութեան ներքոյ տքնում եւ տառապում է անոք եւ անմխիթար, իր արեան գետերից ոճրագործ-պետութեան անթիւ հրոսակների համար լճացած լուղարաններ պատրաստելով, իր ընտիր կոյսերից նրանց հարճեր տալով, մատաղհաս մանուկներից հրոսակների պետերին դրանիկ-մանկլաւիներ տալով եւ վերջապէս իր ճակտի բորանց արգար արդիւնքի 1/100 երրորդ մասն էլ իրեն պահելու եւ վայելելու ոյժն չունենալով... Եւ մէկը թուել...

Այդ երկրի անունը Տաճկահայաստան կը կոչուի, ոչ թէ Մեծն-Բրիտանիա, Ջուրջերիա կամ Կովկաս... Յետոյ եւ եկել եմ այնիւ Յեղափոխականի համար այդ առաձգական զօրութիւնն ունեցող Տաճկահայաստանի անմիջապէս Արեւելեան հորիզոնն ու չըմանակը կազմող պարսկական ռահմանադրից, որտեղ եւ նոյնպէս բուն յեղափոխական կեանքի մէջ լինելով երկարատեւ զանազան դասակարգի Յեղափոխականի հետ չփոխելով, ըստ այդմ եւ ուսումնասիրելով այդ կեանքն եւ իր ներքին պայմանները, իրաւունք եմ տալիս ինձ քննադատելու կարգ մը գործունէութիւններ, որք հայրենիքի փրկութեան գործին ծառայելուց առաջ, նախապէս նպատաւոր էին լինում այդ տեսակ գործեր առաջ բերողների անյատակ, ամէն աղտեղութիւններով իր օրկորներին եւ հեշտալի գուռաճութիւններին... Ամերիկեմ, բանական, ուղիղ ու նեցողների բոլորստ ականջների բաժինն էր սա:

Այժմ դառնանք մեր քննադատելի խնդրի շարունակութեանը:

«Տարս»-ի նախորդ թիւով Պարսկաստանի Դաշնակցութեան պահագրգռող գործունէութիւնը ցոյց տուինք: Եկաւ 1897ը. հայ ժողովուրդի այն մասը որ հաւատացել էր նրանց քանի տարիից ի վեր մինչեւ 96 թուականը եւ չէր խնայել իր բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը, սպասած գործը արգիւնքը չտեսնելով սկսեց ստուել իր կովկասցի հերոսներից եւ քաղկեդոններից սկսեց գոցել աշխարհի ամէն անկիւնը երկրաչափերից աւելի շրջիկ Դաշնակցական ներկայացուցիչների առաջ: Ի՞նչ պէտք էր անել, այդ նիւթական անանկութիւնից դուրս գալու համար, ու եւ ելք հարկ էր մտածել, այդ ելքը չուտ գտնուեցաւ — իմաստութեամբ արշաւանք անել — Որքան գեղեցիկ միտք, այդ միջոցով նրանք թէ կրկին ժողովուրդին նիւթապէս թալանելու համար ձեռքներումը դէնք կ'ունենային եւ թէ արշաւանքը եղած տեղը, իրենց կեանքին կաշիներին վտանգ սպառնացող տեղ չէր:

Իմաստօր գտնվում է Վասպուրականի հաճախի Աղբակ գաւառի արեւելեան ծայրում, ընդարձակ տարածութիւն ունեցող չըմապատուած փոքրիկ լեռնաշղթայներով: Տաճկահայաստանի Արեւելեան կողմից պարսկացի ճիւղ սահմանագրուին է: Ինչպէս Գեղարքի եւ Արաւիկի բարձր լեռը բաժանում են Սաւմաստն ու Աղբակը: Սաւմաստն Պարսկաստան է. Սաւմաստնից իմաստօրը 3 ժամ հաղիւ տեւէ:

Վասպուրականի Պարսկաստանում եղած լիազօր ներկայացուցիչը դէմ էր սկզբունքով այդ տեսակ արշաւանքի, ինքը վստահէր. Օ՛հ, տեղն է ասելը, որքան հալածում են այդ թիւրքերացի ընդի Հայ գործիչները Կովկասցիներից, Սուլթանի կառավարութեան սոսկալի հալածանքներից ստիպուած տարագիր իրենց հայրենիքից դուրս են գնում նրանք եւ աւելի սոսկալի հալածողի են պատահում, ներքին թշնամիներին, դրսեցի գործիչներին, որոնք պէտք է արդէն ասել որ ոչ մի ամենակեղտոտ միջոց չեն խնայել հալածելու, նոյն իսկ սպաննելու (*) ձեռք ընկածներին այն թիւրքերացի գործիչներին, որովհետեւ այլ կերպ է մտածում թիւրքերացի բուն երկրի գործիչը, իսկ ըստրուկին այլ կերպ դուրսեցիները: Այդ տեսակ միջոցների դիմեցին եւ ապա յաջողեցան մտնել Տաճկահայաստանի զանազան անկիւնները ինքնակող հիւ-

(*) Տե՛ս թիւ 9 «Տաւրոս», Դաշնակցականները Պարսկաստանում յոգուածը:

րերի նման եւ սկսեցին վարել Յեղափոխական գործը ապա եւ ուրեմն այս անկերպարան վիճակին հասցրին: «Լեռնից եկողը, տան միջի եղողին հալածեց եւ տան տէր եղաւ» ասում է թրքական առածը: Ահա այդ տեսակ երկար տարիների գործիչ մ'էր եւ Տաճկահայաստանցի Վասպուրականի, Պարսկաստանի ճիւղի ներկայացուցիչը, որը եթէ թրքական բանտում մաշուէր գուցէ միայն ֆիզիքապէս, իսկ նա երկու ու կէս տարուայ չըմանում Կովկասցիների հետ գործ ունենալուց յետոյ ներքին հոգեկան տանջանք եւս ունէր անկեղծ տենդային դրութեան մը հետ, բուն երկրացի եւ դրսեցի գործիչների խնդրի մասին եւ կը գրեմ ուրիշ անգամ աւելի ընդարձակօրէն:

Դէմ էր ասեցինք այդ վերոյիշեալ անձնաւորութիւնը, այդ տեսակ մի արշաւանքը կամ որ նոյնն է անհիմն ցոյցի, նա պահանջում էր եղած դէնքերի, նիւթերի ուժը երկրում տեղափոխել եւ երկրի մէջ մօտիկ ժամանակում որոշ ուժ կազմելուց յետոյ հիմնաւոր մի գործի սկսել, եւ այդպէս էլ ոչ միայն Վասպուրականում այլ եւ ուրիշ կարեւոր նահանգներում:

Բայց ո՞ւմն էր հասկացնում, մի ժամուան մէջ 60 անգամ, Աղբակ, Հայրենիքի փրկութեան գործը գլուխ բերելու ծրագրով սագորդող Կովկասցիներին, ի՞նչ զարմանք: Պարսկաստանում եղած Կոմիտէի Կովկասցի անդամները 97 թիւից Կովկաս անցնելով, այնտեղ եւ գոյների հետ վերջնականապէս համաձայնութիւն գոյացնելուց յետոյ, պրօպագանդային էին սկսել Կովկասում, որի հետեւանքը այն եղաւ որ կրկին Ատուրպատական սկսեցին թափվել հայդուկներ մարտ ամսից սկսած: Ժողովուրդը նորից քաղկեք բացարից... Նորեկ հայդուկներից ամէն մէկի առաջին հարցումը սա էր լինում թէ «որտեղ է 10,000 հոգուց բաղկացած հայկական բանակը» մեր հարցին թէ ո՞վ է խաբել ձեզ այդպէս, պատասխանում էին «Կովկաս եկող եւ միջ այստեղ ուղարկողները»... Հիասթափումը առաջին րոպէից տիրում էր նորեկ հայդուկին: Մինչեւ Մայիս 15 ը արդէն 400ի հասաւ հայդուկների թիւը, որից 130 հոգի հաղիւ դրսեցիներ էին, մնացեալները Տաճկահայաստանցի Ատուրպատականի հայ տարրը նորից սկսեց հիւրասիրել այդ ինքնակողներին, իր տան, իր յարկի տակ, ընտանեկան չըմանում եւ բացի այդ արդէն իւրաքանչիւր հայդուկը իրեն տան տէր իրեն իրաւունք էր համարում զօռով տան չէմքից ներս մտնել:

Պատաստ հայդուկների ասուածը մեծանալով թիւը Վասպուրականի ներկայացուցիչ կողմն էին, այսինքն երկրի միջի ժողովուրդի ձեռք դէնք հասցնելու գաղափարին, մէջոցը յամաներ էին մնացել Կովկասցի Կոմիտէականներից, որոց անդադար գոռոցը սա էր, «Բիւրօս որոյն է, չենք կարող չանել»: Ի՞նչ գեղեցիկ գործադրում էր արապկեղծանան սկզբունքը... Նիւթական ուժը իրենց ձեռքն էր, բայց եւ այնպէս հակառակ կողմը հայդուկային ուժն էր: Ամեն ի՞նչ խառնվել էր, իւրաքանչեւ թագաւորութեւն էր, որի հոգ թէ մէջոցը ժամանակն էր կորցում, օժանդակողներն են տուժում, իսկ Սաւմաստնից բացի նիւթապէս տուժելուց, սոսկալի կերպով տուժում էր եւ բարոյապէս...:

Յունիսի սկզբին միամիտ հայդուկներին համոզելու համար սուտ լուր մը տարածուեցաւ թէ «վեհապետական ժողով մը պէտք է լինի, արշաւանքն անհրաժեշտ է, արդէն Կ. Պոլսում էլ Բանդային ցոյց մը պիտի լինի, այս երկու խնդիրները վերջնականապէս պիտի լուծեն»... վեհաժողովում հայկական հարցը...

(Շարունակելի) ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՏ

Հետեւեալ նամակը կը հրատարակենք Հայաստանի մէջ տիրող սոսկալի կացութեան մէկ տխուր պատկերը ներկայացնելու համար մեր ընթերցողաց ինչպէս կը տեսնուի այդ խեղճերը կը հաւածուին թուրքէն, սովէն եւ որ սոսկալին է հայ չորպաճիէն հաւասար անթոթեամբ:

28 փետր. 1898

Ի բանտին Գասապայի

Մեծապատիւ

Մարգար աղա Չանոյեան

Ի վառնա-Պոլսկարիոյ

Աղնիւ և հարազատ եղբայր,

Ձեր 1897 հոկտեմբեր 1 թուակիր նամակնիդ երեք ամիսէն, այսինքն գեկտեմբեր 27ին մեզ հասաւ, կարդացինք և պարունակութեանը վերահասու եղանք: Կարգ մը գանգաւանք կրնէք որպէս թէ մենք զՁեզ մոռցանք և թէ որպէս թէ փախչի եղբայր ենք եղեր մենք: Վերջապէս կարգ մը խօսքեր գանգաւանի ձեռքով: Եղբայր, այդ կէտերը թող Սասունած քննէ թէ մենք հարազատ եղբայր ենք չէ նէ դրամի եղբայր ենք:

Գարով նամակ զրկելու կամ չը զրկելու խնդրոյն, վառնա հասնելէ մինչեւ այս նամակս կարելի է երեսուն նամակ եղաւ որ կը զրկեմ և պատասխան չեմ առնուր, քեզ չեն հասնիր եղբր նամակներս հապա ես ինչ ընեմ: Բան մ'ալ կայ և սա է թէ եղբայր մը զեղբայր մը կրնայ ըլլալ որ մոռնայ բայց հայր մը զաւակ մը և իւր ամուսինը կրնայ մոռնալ որ դուք զաւակդ ու կինդ մոռցայք: Այո, մոռցար զաւակդ ու կինդ վստօնով մաս տարի ու կէս կ'ըլլայ որ վառնա կը գտնուի մէկ նամակդ միայն առած եմք և մէկ երկու անգամ ալ Արալանեանին նամակով տող մը բան գրած էք: Մերան թուշուններն անգամ իրենց ձողերը չեն մոռնար և անպաշտպան չեն ինչուր բայց մարդիկ կը մոռնան իրենց զաւակները: Ըսել է թէ մենք թուշուններուն չափ անգամ չխնդ: Այս անգամ Արալանեանին նամակով կը գրէք թէ «քանի մը զրէ» առնելիք ունիմ երբ առնելու ըլլամք զի քանի մը զրէ «կ'ըրկեմ» եղբայր, դիտէք երբ մարդ մը գտնի ունենայ իւր զաւակաց և մարդոց վրայ, անոնց խեղճութիւնը լրածին պէս կը մուրայ ու անմիջապէս օգնութիւն կը զրկէ իրեն: Ներուն: Մեղք, հազար մեղք Ձեզ, տեսէք անցեալ տարի, այսինքն, անցած գարուն անթոթութենէ ալ ճարեքնիս հատաւ եւայ մինչեւ խարբերդ գացի մուրալու չորով չօճուղները անթոթութենէ ազատելու համար, այս անգամ կրկին ճարեքնիս հատաւ, ո՛չ միայն ես հապա 60-70 վաթսուս եթմանաւուն տուն միանալով՝ մեր գիւղէն գացինք Գասապացի Յովակիմ աղային և մէկ ուրիշին մեր գիւղին մէջ ունեցած ամպարները, 40-50 զարեկ ցորեն, զորով կտրելով՝ մէջերինս

բաժնեցիներ և այս բանին համար 16 օր է այս որ բանն եմք ինչպէս որ նամակիս վերնագիրն ալ կը ցուցնէ: Այդ 50 զարեկէն մեզի 12 օրակ է ինկեր գիտցած ըլլայք վաւրեղի ամբողջ գիւղի մը անթոթութեն: Ըսելով 50 զարեկը ինչ կրնայ ընել: Մենք տակաւին բանն եմք թէ եւ գիւղէն ալ լուր կ'առնու՞մք որ 12 չափն ալ ընցուցեր են և այսօր հաց մը անգամ չ'առնին ուտելու ես ի՞նչ ընեմ: ալ Աստուծոյ ողորմութիւնը հասնի: Ես բանտին մէջ անթոթի 7 եթմը ճան ալ տունը անթոթի կը ջարդուին, դուք ալ հոգ անտարբեր նստած էք հոգեւորիդ չէ եթէ հոգեւորիդ ըլլայ և մեր վրայ կամ գոնէ քու զաւակիդ վրայ ցաւ ու հոգ որ տանելու ըլլայ, թող ըլլայ որ բուրովին պարտալ ալ ըլլալու ըլլայ, կը մուրաւ, պարզապէս ըսեմ, կը մուրաւ ու օգնութիւն կը հասցունես: Ըսել է որ բնաւ հոգե չէ մեր սովէ մեռնիլը: Այլ քաշած հերիք եղաւ նոյնպէս ձեր անտարբերութիւնն ալ բաւական եղաւ: Գրածներուն ճշմարտութիւնը հոս ամեն մարդ կը տեսնէ վաղը միւս օր դուք ալ կը լսէք երբ որ մեր բանտարկութիւնը և անոր պատճառը լրա գիրներուն մէջ կարդալու ըլլայքնէ: Սուս խօսելու բնաւ պէտք չ'ունիմ: Յովակիմ աղայն ուրք է կու խեր թէ անպատճառ ցորենս կու տայք հիմայ և կամ չարեկ գլուխ լիւրայ մը հիմայ կը վճարէք մինչեւ որ չի տայք ձեզ ալ բանտէն ելնելիք չկայ: Ձեզ ալ որ կտրելու ըլլան, ոչ հոս մը ցորեն ունիմք և ոչ ալ փարայ մը, միջոց կ'ուղենք մինչեւ կալ, չտար, կը մեռնիմ ու խօսքս կը քայքայուեմք: Կ'ըսէ, մինչեւ միւս կողմանէ ալ մենք հոս 27 քսան եւ եթմը հոգի բանտին մէջ անթոթութենէ կը մեռնինք, գիւղն ալ տեսցիք անթոթութենէ կը մեռնին, ալ միւս մանր ու մունր բաներն ալ չեմ ուզեր գրել: Աստուած վերէն կը տեսնէ մեր անտանելի վիճակը ու չեմ գիտեր թէ ինչպէս կը լսէ ու կը համբուրէ: Սնանկ անտանելի է վիճակնիս որ բանտէն ոստիկանով կ'եննք ու Գասապայի մուհալէները երթալով և արեան արեան արատաւ թափելով ձեռքերնիս կը բանանք ու հաց կը մուրանք սակայն նորէն չեմք կրնար հանգիստ ուտել երբ կը խորհինք թէ հիմա տեսցիք ալ բոլորովին անօգուտ կերպով անթոթ ըլլալով՝ ի՞նչ կ'ընեն, հիմա չօճուղները ինչպէս կուրն ու կը պօռան ու կը խօսան անթոթութեան համար: հաց, հաց, պօռալով: Երբ այս բաներուն վրայ կը խորհիմ սիրտս կը փռնի և կ'սկսիմ յորդարտաւոր թափել: Հապա եղբայր, դուք ինչ տեսակ սրտի տէր էք որ մեր այս բոլոր քաշածը կը լսէք ու անհոգ և պաղարիւն կը մնայք: Մինչեւ որ նամակս ընցուցի երեք անգամ զիս կանչեցին ոստիկանապետութենէն ու դատարանէն ամպարներուն համար հարցաքննութիւն ընելու: Ինչ հետ բանտը եւ

ղողներն են վարդան և Մկրտիչ Տեփկանց, Հայրապետ Պողոսեան, Նիկողոս Կոչկարեան, Աղամ Ղուկասեան, Մարութ Արալանեան, Թորոս Սասունցի, Առաքել Կուրդեան, Օհան Գաղիկեան, Տօնիկ Արոյեան և ուրիշ շատեր նոյնպէս Տաճիկներէն ալ այս պատճառաւ մեզ հետ բանտարկուած են Հասան Պէյին աղան Պէքիրը, Խուրշիդ Պէյին աղան Գարաման Պէյը և Հէսոյին աղան Մէմէտը: Ասոնցմէ զատ բարեկենդանի ուրբաթ օրէն մինչեւ այսօր, որ 16 օր կ'ընէ 40-50 աղայ մեր գիւղէն միշտ Գասապայի շուկաները այս գործին համար փութուած կը պտտան: Այսպէս գիտցած լինիք: Հիմա որ ամեն բան ձեզ հասկցուցի նորէն անհոգ ու անտարբեր կեցեք և մեզի օգնութիւն մը մը ընէք, ալ դուք և ձեր խիղճը: Չմոռնալ ըսելու որ Գագրիկանց Զաքարիան կ'ընէ մեր եկէն Թորոսին աղան ու աղջիկը ասկէ ամիսէն աւելի առաջ մտնի երկու ամիս առաջ անթոթութենէ մեռան: Մարգար գրիչ յառաջ չ'երթար որ գրէ: Չտեսած բաներնիս պատահեցաւ մեզ, կրկին և կրկին Սասունած ինք ողորմի մեզ, ապա թէ ոչ մինչեւ կալ հարկւաւոր մարդիկ կը մեռնին մեր գիւղէն միայն:

Տեսցիք ողջ են թէ եւ, բայց եւրանի թէ ողջ չըլլային: Բարեւելով զձեզ և ձեռներդ համբուրելով՝

Մ'նամ հարազատ եղբայր Ձեր

ԱՆՆՈՒՄԱՆԻ ԶԱՆՈՅԵԱՆ

ՄԵՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ.

Նախորդ յօդուածիս մէջ խոսատացեր էի Միութեան հարցին վրայ խօսիլ, որ այնքան սոսկում կ'ազդէր մեր Ֆիլիպպի Գաշնակցականներուն, որոնք չէին ուզեր Շաֆէյի Տիկիներու գեղունակ դեղիններէն զրկուիլ:

Օհ, այդ ոհաւոր հարցը մէջտեղ կը նետենք, որովհետեւ զանի խեղդելու համար էր որ ամեն ոտոր միջոցներու գիմեցին քաղաքը տուին ու վրայ ընող կարգ մը նենգամիտները: Ի՞նչ, Շաֆէյի ամականները հաւասար իրաւունք ունենալին կըլլելու Հնչակեանները և Արմէնականները... ոտիկա կարելի էր: Միութե Գաշնակցութեան Պարոնիկները վիշենայի մէջ, Ժընէվի մէջ, վառնայի մէջ, Ֆիլիպպի մէջ և ամեն տեղ առանց գարեջուր խմելու մնացին: Ո՛ւր երթար Յակոբիկ Գիմլանեան, ո՛ւր երթար Գեւորգի մը խանութին մէջ սմբած Ե... ասոնք ո՛ւր երթային Ֆիլիպպէն, եթէ Շաֆէյ դադարելու ըլլար զանոնք ապրեցունէ: Ո՛չ ապաքէն տարեկան ընդհանուր ժողովին համար քիչ շատ խեղճի, լեզու ունեցող և լրագիրներու մէջ յօդուած տուող մարդ մը պէտք էր, ինչպէս

չըլլային Յակոբ մը և Ե... մը: Այս բոլորը ինչի՞ր էր, մտածո՞ւմ էր, գուշակելու և նախատեսելու պարագայ մըն էր:

Միութեան ինչի՞ր... ոտիկ ցծագում կ'առնէր տարիկա քաղքի մը մէջ, ուր տիկիները, օրիորդները, վարժուհին, վաճառականը, գրագետը, վարդապետը և իւր բոլոր սարօքն հանդերձ Գաշնակցութեան հակայ տրճանին առջեւ ծնրադրած իրենց համբոյրը, գովեստը, պատկառանքն ու դրամը կը նուիրէին: Ասիկա քաշելու բան չէր, որ կարգ մը խաղիկներ ելնէին ու իրենց լայնածաւալ աւազանին մէջ քանի մը կաթիլ թոյն թափելու աշխատէին:

Ուստի ժողովներ, նիստեր, խորհրդակցութիւններ և հաւաքումներ իրարու ետեւէ կը կատարուէին: Պարոն Ե... , որուն նախագահութեամբ տեղի կ'ունենային այդ բոլոր դաւադրական նիստերը, վերջապէս յաջողած էր քանի մը կողմ հետեւողներու ամբողջ խմբակ մը կազմել, և իրեն մանաւանդ նեցուկ ընել մարդ մը՝ որ քիչ շատ ժողովրդական համակրութեան կ'արժանանար, այն միակ եղական ու ճշմարիտ պատճառով՝ որ Ֆիլիպպի ըլլալով մէկտեղ սիրտ ունեցած էր, հարեւաւորապէս տեսնելու կըլլար միւս միւսը: Մարգար-Հայրենիք երթալու անձնուրութիւնն ալ ըրած էր: Ասիկա արդարացի խանդաղատանք մըն էր զոր իր հայրենակիցները, մանաւանդ գաւառացի դուստկարգը իրեն չափէն տեսի կը չալայէին: Խանդաղատանք մը, գորովալի ցոյց մըն էր որ տեղացի երիտասարդներուն կը մղէր հանգիստ ու կերպով ընդունելութիւն մը ընել անոր՝ նուիրելով լտարանին մէջ սուր մը և վեց հարուած մը, միւս կողմէն կը զրկէր գաւառացիներուն, որ իրենք ալ յայտնեն այդ օրինակ համակրական խանդաղատութիւն մը, անոնց՝ որ նուիրեցին ոտիկ ժամացոյց մը և ոտիկ շղթայ մը:

Մենք նպատակ չունինք այդ արարքները ծաղրելու. քաւ լիցի՛. ընդհակառակը ժողովրդական այդ տեսակ խանդաղատութիւններ տեսնելով, աւելի յուսալից ու գիտակցական գաղափարներ ունեցող երիտասարդութիւն մը կը գտնենք: Բայց երբոր այդ խանդաղատութիւնները շահագործուելու աղբիւր դառնան, այդ սուրճ՝ փոխանակ թշնամիի դէմ գործածելու, իր արեւուն կողմ ընկերին դէմ գործածած է, այդ վայելած համակրութեան վրայ կը թնկելով վրայի մը ուզէ ըլլալ, և վերջապէս իրեն տուած գիճքը բոլորովին անաւիկ կարծելով ելնէ ամեն ճշմարիտ գաղափարի ու պահանջի դէմալ կուրծք տալու պատրաստութիւն, ան տեսն ինքնին ծաղրելի ու միանգամայն զզուելի է: Այո, կը կրկնենք, մեր նպատակը մերկայցնել է բոլոր այն մարդերն, որոնք գիտակցօրէն կը գործեն և բոլոր այն մարդերն ալ, որոնք անգիտակցօրէն և կուրօրէն գործին

մէջ մըրում են : Այնչաւ , շատ եր-
ջանիկ պիտի ըլլայինք , եթէ մեր
գրութիւններէն փոխանակ վշտա-
նալու , այդ կողմ հետեւողները
հասկնային իրենց սխալը , գիտնային
իրենց ըրածներն և ճանչնային ի-
րենց ընկերները : Մի՛թէ հաւատա-
րապէս զատապարտելի չէ՞ այն մար-
դը , որ կը պաշտպանէ գող մը ,
մարդասպան մը , ընկել տապան մը
... սակայն չուզեր մեղսակից ըս-
ուիլ : Մի՛թէ Դաշնակցականներուն
երբոր այսօր ընկերասպան , ոճիւ-
գործ , խաբէրայ , խաչագող անուն
կուտար Պ. Ոսկան Նազարեանց իւր
սարսուռի գրութիւններու մէջ ,
ծաղրելի չէ որ վառենայի մէջ Դաշ-
նակցականները , ֆիդայէի մէջ Դաշ-
նակցականները , վերջապէս բոլոր
Դաշնակցականները մէկտեղ ելնեն
ըսեն թէ Պ. Ոսկանի ըսածը մեզի
չը վերաբերիր , այլ Պարսկաստանի
Դաշնակցականներուն համար է :

(Շարունակելի)

ՏԱՐԱԳԻՐԸ

Երիտասարդ ստուեր մը թոյլ , գլխիկոր
փողոցներէն կ'անցնի յուշիկ տալն օր ,
Անուշադիր՝ ետեւեւուն կեանքերուն ,
Աչքերը պի՛չ հորիզոնէն ա'լ հեռուն ... :

Դժխեմ բախտին ինկած ներքեւ մագիլին՝
Ան ուսանող մըն է թերեւս տակաւին ,
Որ կը յածի տար երկինքին տակ կապոյտ
Հեռու ծոցէն Հայրենիքին մոխրակոյտ :

Իր ձգտումներն , անխոնջ ճիպերն , իսկալ
ձգակոտոր եղան գացին հիմա ալ .
Մինակ հացի կոտի ողին մահադէմ
Ճիւղի պէս կը տընկուի անոր դէմ :

Հալած , մարած են իր աւելն , խանդ ու յոյզ
Քառս մըն է մատաղ հողին մրկալոյդ ,
Անթիւ հողեր , մոմտու ճներ , զերդ ցեցեր
Իր կոյս սիրտը կը ծակծկեն՝ անտարբեր :

Սառու դէմքեր , կապար սրտեր՝ ամենքնալ
Չեն իսկ հաճիր գէթ սփոխանք՝ իրեն տալ
Ան՝ դեռ չընկած կեանքի բաժակը դիւ-
թական :

Անէութեան մէջ կը փնտռէ ապաստան ... :

ԿՕԵԿԱԿԱՐ

«ՏԱԻՐՈՍ»Ի ՆՊԱՍՏՆԵՐ

Ռուսոճուքէն բարեւէր ոմն Յիպէի
միջոցաւ զրկած է 20 ֆր.
Վառնաի օժանդակ խմբէն 4 ֆր.
Վառնաէն ուղեւոր մը 7 ֆր.
Մեր բարեկամաց նամակներուն և
հարցումներուն պիտի պատասխանենք
յառաջիկայի :

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ

ԲԱՌԳԻՐԲ

ԳԱՂ. ԵՒ ՀԱՅ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Սոյն բառագիրքը կը խօսի աշխարհիկ
լեզուով և գործնական ոճով Բժշկու-
թեան , Վիրաբուժութեան , Առողջա-
բանութեան , Ծառաբարուեստից , Բը-
նաբանութեան , Քիմիայի , Դեղերու ,
յնական պատմութեանց , Աստղաբաշ-

խութեան , Երկրագործութեան եւ այլ
գիտութեանց վրայ :

Ըստ կարելւոյն ամենայն խնամք տա-
րած է լատերու ճշգրտութեան : Ընդար-
ձակ բացատրութիւններ կուտայ իւրա-
քանչիւր նիւթի վրայ , ի բաց առեալ
ամենէն անգործածական նիւթերն . իսկ
կարեւոր նիւթոց վրայ էջերով օգտա-
կար տեղեկութիւնք անպակաս են :

Այս աշխատութիւնը որպէսզի յինք-
եան կատարեալ ըլլայ , հեղինակը իրեն
առաջնորդ բռնած է շատ մը հանրագի-
տական և բարոյական բառարաններ :

Գիտական բառերու մասին առաջնա-
կարգ թիկունք եղած է այս գործիս
Վ. Հ. Քաջունոյ Հանրագիտակ ընդար-
ձակ ընտիր բառագիրքն . իսկ բոլոր
մասին Վ. Հ. Ալիշանի Հայրուսակն :

Աւելորդ չէ համարուած դիմելու նաև
մասնաճիւղերու վրայ խօսող գրքերու
օգնութեան :

Հեղինակը խնամքով այս ամեն եւրո-
պական ընտիր գործերէն քաղելով ա-
մենէն գործնական և օգտակար գի-
տութիւններն՝ զանոնք խմբագրած է
մի հատորի մէջ՝ զայդարեւով ամէն ճիւղի
փրարեւելալ գիտելի պատկերներով :

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութա-
ծալ թերթերու մէջ . իւրաքանչիւր
թերթի երկայնութիւնն է 24 հարիւ-
րորդամբար , լայնք 16 հարմ . գրերը
մանր և գիւղընթիւնի :

Իւրաքանչիւր թերթի բաժնորդագիրն
է 20 սանթիմ , ամբողջ գիրքը 10 ֆր .
զոր կանխիկ ներփակեալ տոմսակաւ
պէտք է փափաքող յէ առ Տեսչութիւն
Տպագրատանս ապահովագրեալ նամա-
կաւ եթէ կ'ուզէ ընդունիլ թերթերը :

Տպագրութիւնը աւարտելէ վերջ , բա-
ռագրոյս գիրը պիտի բարձրանայ 15 ֆրի :

IMPRIMERIE ARMÉNIENNE
S. LAZAR
(Italie) VENISE

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ե.

Ռուսմանիոյ հայերը պահելով հան-
գերձ իրենց առհմային հաւատնդ
յառկանիչ՝ երն , ցաւ է մեզ ըսել
որ անձանթ մնացած են Տաճկա-
հայոցս : Մենք սիրայօժար պիտի
հետաքրքրուինք յետ այսօրիկ իրենց
կեանքով այս սիրահներուն մէջ :
Վերջին օրերս հոս հասած բարե-
կամէ մը կը լսենք և այն շատ ցա-
ւօք մահը ողբացեալ Միսալ Սքասի
— բուն թուկօֆկացի — որ ինչպէս
կ'ըսուի այնքան հանրածանօթ եղած
է իւր ընտիր բարեմասնութիւննե-
րով և հայրենասիրական եռանդով :
Մենք կը խոստանանք ի մէջ այլոց
յիշեալ պատուական անձնաւորու-
թեան վրայ լրացուցիչ տեղեկու-
թիւններ առնելով , հաղորդել մեր
ընթերցողաց , առ այժմ՝ հանգիստ
մաղթելով իր պատուական ոսկերց
և մխթարութիւն իր ընտանեաց
անձնիւր անդամոց :

..

Ձէյթունի մէջ արդէն բողբա-
կան միսիոնարք , յաջողած են աղօ-
թարան հաստատել , կիրակնօրեայ
սղօթքներն նուագարանով երգել ,
քարոզներ տալ եւ այլն , բաւական
յաճախողներ ունենալով . զայն
տեսնելով Հոռովմէականք եւս ձեռ-
նարկած են մի փառաւոր Եկեղեցի

կանգնել Ձէյթունի կեդրոնը : Ձէյթ-
թունցիք որ այնքան յերմիւ կապ-
ուած էին Լուսաւորչական Եկեղեց-
ւոյն , տեսնելով մեծապատիւ Լու-
սաւորչականաց անապրեքութիւնը
իրենց անօթի և սովամահ օրերուն
մէջ և փրօթէսթան ու գաթօթիկ
աղգաց միսիոնարներու միջոցաւ եւ
ղած օգնութիւններուն շնորհիւ ոչ
միայն իրենց նախկին ընդդիմու-
թիւններէն վաղ եկած են այլ եւ
սիրով կը յաճախեն անդ աղօթք-
ներ ու քարոզներ լսելու :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նիհայէթ Ամերիկա վէ Սպանիա
արասընտա մուհարէպէ պաշլանտը ,
վէ կէօրեւնիչոէ Ամերիկալըլար
զալէպէ իտէճէքլէր , խոսուսիյլէ
շու իրի սէպէպաշն . պիրինճիսի
սէրվէթ , իրինճիսի մէսաֆէ , թէճ-
րիւպէքեարլար զաթէն սէօյլէմիշ
սիրէրքի մուհարէպէտէ ֆիւթու-
հաթ գազանմագ իշիւն իւշ չէյ էլ
զէմ տիր — Ա. փարա , Բ. փարա ,
Գ. փարա :

Ֆիթուհաթ հէր հալաէ Ամերի-
գալըլարաւ օլմագ կէրէք տիր ,
շիւնքի փարալարը չօգճա վէ իքին-
ճիսի մուհարէպէ մէյտանը օլան
Գուրպա Ամերիգանըն պուրնր ալ-
թընտա սրը , հալպուքի Սպանիա-
լըլար պինլէրճէ քիւրմէթու ուզագ
պուլընպ , աքէր , մուհիմաթը
հարպիլէ վէ վալլիհիւմ օգատար
ուզագտան թաշըյաճագլար :

Սպանիա խարիճի տիւլմանը իլէ
թուլթըլըր օրըրաւա տախիլի տիւշ-
մանլարաւա տախի մաաֆի աւիլ
տիր , իշպու նիշան վէ էմմարէլէրէ
պագըլընճա եէք նազարաւա մուհա-
րէպէնին նէթիճէսի Սպանիալըլար
իշիւն ֆայտէլի օլմայաճաղընր ֆէհմ
օլընըր , լաքին պուրնըրա պէրապէր
շիմաիտէն հիշ պիր չէյ սէօյլէյէմէիգ
Ձիւնքի , հիշ պիր քիմաէ զանն ու
իթիգաւ իթմէմէքաէ իքէն , Բու-
սիալըլար 1870 մուհարէպէսինտէ
ֆիթուհաթը գազանարագ Բարիսէ
գատար կէլտիլէր :

Շիմտիլէք ալընան թէլէկրաֆլար-
աւան պիւսպիւթիւն Ամերիգանըն
գազանաճաղը իշիւն էմին օլմագ
քեարը ագըլ աւիլ տիր . պէլաւ-
նին կիւվէսի օլան պիր թագըմ մէն-
ֆաաթթըրէսթլէր մուհարէպէյի քէն
տիլէրինէ ալթ իթիթիւաղ իտէրէք
ֆագիր ու պիքէս էհալիի աճըրգաւան
էօլտիւրմէք վահշ թիւնի իճրատա
աւալ ինսաֆ իթմէյօլըր , աղ գաւ-
աղ էքմէյին քիւրալընր պիր ֆրանկա
եէտիլէճէքլէր իտի , ինսան սիմա-
թընը հայիլ լաքին աւընտա ճանա-
վար օլան պու ինսանլարաքի մէր-
համէթսիլիք վահշի վէ խուրիշ
հայլանլարաւ պիլէ եօգ աղը աէսէք
ճաիլ տիր : Լաքին՝ մա էլ մէմուսիէ
Պուլկար հիւքիւմէթի պէլաւնին
էհալիսինէ սիյանէլթէն էօյլէ զաւ-
տարլարա մէյտան վէրմէմէք իշիւն
խարիճ զալիլէ կէսուտէրմէկի մէնն
իթմիշ տիր :

Շիմտիլէք Ամերիգա վէ Սպանիա
պիրպիլէրինտէն վարօր զապթ իթ-
մէքաէ տիրլէր վէ Ամերիգալըլար
պու խուսուստա տահա մահիւր կէօ-
րիւմէքաէ տիրլէր , մուհարէպէնին
սուրէթը ճէրէյանընտան Գուպա
Սպանիանըն էլինտէն կիտէճէկի
կէօրիւնիւյօր :

Ամերիգալըլար Սպանիանըն աէ-
նիլ ալթընտա պուլընան թէլէկրաֆ
թէլլէրինի քէսմիշ օլըրգլարընտան
Ամերիգա ֆիթուհաթ խապէլլէրինի
տահա չօգճա իշիտէճէյիլ , զիրա
Սպանիա քէնտի հալաաիսաթընը
լէք սուուպէթլէ վէրէպիլէճէք :
Ինկիլիզաէն մատաւա պիւթիւն
էլօրօանըն թէլլէճէհիւհի Սպանիա
թալաֆընտա օլըրղը կէօրիւնիւյօր :

Մաքինլէյ Մանիլայա օրտու
կէօնտէրմէք մէսէլէսի հագգընտա
պիր գարար վէրմէք իշիւն ամիրալ
Տիւլէյիւն լարթօրթլարընա պէքլէ-
մէյի մինասիպ կէօրմիւշ :

Ձէքիլէն թէլլէկրաֆլարաւա Մա-
նիլանըն թէլլիւմ օլընաղըր վէ Ա-
մերիգա պաւտէրասը ֆիլիքինլէրաւ
չէքիլէճէկի պիւսիլիօլար :

Հէրալտ կազէթալընըն եազաւը-
ղնա նազարէն՝ սէրի իւլ հարէքէ
իքի կէմի կէօնտէրիլմէի իշիւն Սան
Ֆրանչիսքօ հիւքիւմէթիւնէ շէաիւ
էմիր վէրիլմիշ :

Ամերիգա Նաշվիլ կէմիսի Սէն
Ֆրանչիսքա եազըն 20 զապիթ վէ
խալլը աքէրի համիլ Սպանիանըն
Արկօնօքա կէմիսինի էսիր թուլթ-
մըշ աղը :

Էքմէք ֆիլաթընը թէնգիլ իթ-
տիրմէք մագսաուրնա մէպին Ֆօկ-
ճիտաւ էհալի թալաֆընտան նիւ-
մայիլաթ իճրա օլընմըշ վէ պիր չօգ
էքմէքճի տիւքքեանլարըն եազմայա
վէրիլմիշ տիր :

Կրամօտա տախի այնի նիւմայի-
լաթ իճրա օլընմըշ աղը :

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՎԵԼԵԱՆ
Վառնա , Բ. թաղ , քիւ 1104

Սոյն տպարանին մէջ կը տպարարտուին հայերէն ,
պուլկարերէն , գաղղիերէն , յունարէն , տաճկերէն եւ
այլ լեզուներով գնահատան տպագրական գործեր որք են
հարանեաց հրատարակներ , այցեւոմն , աղբարարու-
թիւն , նամակագրութիւն , պահարան , հազգեւոմն , մահ-
աղ , գիրք , եւ այլն :

ՄԵԾ ԽՈՍԱՄԳ ԵՒ ՄԱՔՊԻՐԻԿԻՆ — ԳԻՏՈՒԹԵԱՆՑ